

մնացին, Հայաստանի վիճակին վերա եկաւ խօսքը, եւ Բագրատունին տխուր ու դառնացեալ՝ ըսաւ.

– Ի՞նչ կրնայ ընել մարդ, երբ իմ վիճակիս մէջ գտնուի. այս մայրաքաղաքը իւր բոլոր պերճութեամբ, իւր բոլոր գեղեցկութեամբ իմ Տայոց մէկ գիւղէն աւելի արժէք չունի աչացս. դու, Ստրատելատ, հոստից կրնաս օգտակար լինիլ հայրենեաց եւ մեզի, ինչպէս եւ եղար մինչեւ այսօրս. իսկ ես՝ հոն հայրենի հողին վրայ միայն կրնամ ծառայութիւն մ'ընել ազգիս:

– Եւ մե՞ծ ծառայութիւն,– ըսաւ Ռշտունին,– ինչպէս ձեզի հասկըուցի, վասնզի բու ներկայութեամբդ կրնանք միաբանել այդ նախարարները, որոց աչքին ես վտանգի եւ կասկածի նիւթ եղած եմ:

– Ես այսօր միջոց մը գրեթէ համոզեր էի,– ըսաւ Երիզագին,– երիտասարդ կայսրը քեզ հրաման տալ դառնալու հայրենիք, բայց դժբախտաբար այդ Փիլակրիոս վրայ հասաւ եւ ամէն խորհուրդ վեր-վայր շրջեց: Եր՞բ պիտի համոզուին յոյնք, թէ հայոց հետ ար-

դարութեամբ վարուիլն է միմիայն ճանապարհ կցորդելու գիրենք:

– Ի՞նչ կրնայ սպասուիլ այդ մարդիկներէն, որ իրենց օգուտը նաեւ չեն ճանչեր, եւ որ կարծեն թէ զհայերը նեղելով կրօնքի մասին, նոցայ դաւանութիւնը բռնաբարելով, անպաշտպան թողլով երկիրն եւ աւար աւազակաց , յարկաց ծանրութիւն բեռնաւորելով եւ ժողովուրդն աղքատցնելով՝ Հայաստանի կատարեալ տեր կը դառնան,– գրուցեց Ռշտունին:

– Բայց այդ երիտասարդ կայսրը,– պատասխանեց Երիզագին,– ես կը յուսամ, թէ օրաւոր ճշմարտութեան կը համոզեմ, եւ քանի որ ապականութիւնը սրտին խորը չէ թափանցեր՝ կարելի է զինքն ազնուութեան եւ արդարութեան հեւցնել:

– Ող՛ջ լեր, իմ պատուական բարեկամս, աստուած հաւատքդ աւելցնէ, դու կը յուսա՞ս թէ այս կրօնամոլութեան եւ յիմարութեան քաղաքի մէջ ու գահույից վրայ կարելի է ազնուութեան եւ արդարութեան սերմ հասցնել: Թո՛ղ այդ տղայական երազներդ եւ ջանանք միատեղ մեր հայրենի երկրին փրկութեան:

– Չրուցե՛ համարձակ, քեզ խօսք կ'ուտամ ինչ կրնամ ընելու:

– Իմ միմիայն փափագս ինձ հետ Ասպետը Հայաստան տանիլն է, մնացածը աստուած կը յաջողէ եթէ ուզէ: